ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
«ԶԱՐԻՇԱՏ (ԱՐԱՄ) ՄԱՐՏԻՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ք. Արմավիր, Շահումյան 3
☏ (0-237) 2-35-60
E-mail: armavir.med@gmail.com

08-261/316 « 20 » մարտի 2024թ.

«Ագաստ» ՍՊԸ-ի տնօրեն
տիկին Գոհար Մուրադյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ
պայմանագրի միակողմանի լուծման մասին

Հարգելի տիկին Մուրադյան

«Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև 2024թ. հունվարի 8-ին կնքված ՆՁՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-07/24-1 պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) հիման վրա 2024թ. փետրվարի 19-ին N08-154/186 գրությամբ պատվիրվել է երակային և զարկերակային ֆիստուլային ասեղների մատակարարում:

Առ. 2024թ. մարտի 19-ը վերոհիշյալ ապրանքը չի մատակարարվել՝ խախտելով պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները: Համաձայն պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի այն համարվում է պայմանագրի էական խախտում:

Հիմք ընդունելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջները, այն է. «Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը», «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ն 2024թ. մարտի 20-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է պայմանագիրը:

Առաջարկում եմ 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի ԱրարատԲանկ ԲԲԸ-ում ունեցած 1510040627260100 հաշվեհամարին փոխանցել պայմանագրի կատարման և որակավորման ապահովման գումարները՝ համապատասխանաբար 185000 և 277500 ՀՀ դրամ:

Տեղեկացնում եմ նաև, որ եթե մինչև 2024թ. մարտի 28-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի պայմանագրի կատարման 185000 ՀՀ դրամը և որակավորման ապահովման 277500 ՀՀ դրամը և վճարումը հաստատող փաստաթղթերը ներկայացվի «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ, ապա Ձեր Ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տնօրեն՝ Հ. Հովհաննիսյան